

ՇՈՂԵՐ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Ֆինանսներ, բակալավրիատ,
1-ին կուրս

ԿՅԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՀՀ-ՈՒՄ

Հիմնաբառեր. կյանքի ապահովագրություն, ապահովագրական ընկերություն, ապահովադիր, ապահովագրող, ռիսկ, ապահովագրական շահ, կապիտալացում

Կյանքի ապահովագրության ընկերությունները, լինելով փնտեսության խոշոր ներդրողներ, ՀՀ-ում բացակայում են: Դրա պատճառներն ու զարգացման հեռանկարների վրա ազդող գործոններն արտացոլված են այս հոդվածում: Ներկայացված են կյանքի ապահովագրության էությունն ու դասերը, ռիսկը կյանքի ապահովագրության դեպքում: Նաև փարված են համեմատականներ Լիտվայի Հանրապետության ապահովագրական շուկայի հետ:

Կյանքի ապահովագրության էությունը

Կյանքի ապահովագրությունը (այսուհետ՝ ԿԱ) ապահովագրավճարի դիմաց ապահովագրողի կողմից երաշխիքի տրամադրումն է՝ վճարելու ապահովադիրին կամ նրա կողմից նշված անձին դրամական գումար ապահովագրված անձի մահվան կամ որոշակի տարիքի հասնելու դեպքում¹:

Համաձայն «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի 1-ին գլխի 7-րդ հոդվածի 4-րդ կետի՝ ԿԱ-ի դասերն են.²

1) կյանքի ապահովագրությունը, որը ներառում է լրակեցության, մահվան, լրակեցության և, միաժամանակ, մահվան ապահովագրությունները, անուիտետը,

2) ամուսնության, ծննդի ապահովագրությունը,

3) ներդրումային ակտիվներին կապվող ապահովագրությունը,

4) կամավոր կուտակային կենսաթոշակային միջոցների կառավարումը,

5) տոնտիին ապահովագրությունը,

6) կապիտալի հատուցման ապահովագրություն:

ՀՀ ապահովագրական ընկերությունները («Ռոսգոսստրախ Արմենիա», «Ինգո Արմենիա», «Ռեսո Ինշուրանս», «Արմենիա Ինշուրանս», «Նաիրի Ինշուրանս», «Սիլ Ինշուրանս») ներկայում մատուցում են միայն ոչ կյանքի ապահովագրության ծառայություններ:

Հարկ է նաև նշել, որ «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքով ապահովագրական ընկերությունները իրավունք չունեն միաժամանակ զբաղվելու կյանքի և ոչ կյանքի ապահովագրություններով:

¹ Ապահովագրական գործ, ուս. ձեռնարկ, էջ 137:


² «ՀՀ օրենքը ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին», 2007 թ. ապրիլի 9:

Ապահովագրվող ռիսկը կյանքի ապահովագրության պարագայում

Կյանքի ապահովագրության պարագայում ապահովագրվող ռիսկը մարդկային կյանքի տևողությունն է, և ռիսկ է հանդիսանում ոչ թե մահը, այլ դրա տեղի ունենալու ժամանակը:

Կյանքի ապահովագրությունը որոշ երկրներում


Զարգացած շուկաներում ԿԱ տրամադրող ընկերությունները տնտեսության խոշոր ներդրողներ են: Մինչև ԿԱ-ի արտոնագրերի հանձնումը (2007 թ. նոր օրենքի (միաժամանակ, կյանքի և ոչ կյանքի ապահովագրություն իրականացնելու իրավունք չունենալու մասին) ընդունումից հետո) ՀՀ-ում գործում էր կյանքի ապահովագրություն, որը կազմում էր ապահովագրական շուկայի ծառայությունների մոտ 1%-ը: Ուսումնասիրենք որոշ երկրների ապահովագրական շուկաներ:




Գծապատկեր 2. Կյանքի ապահովագրության մասնաբաժինը (մլն եվրո)

Ինչպես տեսնում ենք, կյանքի ապահովագրավճարները որոշ երկրներում հսկայական տոկոս են կազմում:

Ուսումնասիրենք Լիտվայի ապահովագրական, մասնավորապես՝ կյանքի ապահովագրության շուկան: Տեսնենք, թե ինչ հարաբերակցություն ունեն ապահովագրավճարները և ապահովագրական ընկերությունների կողմից տրված փոխհատուցումները:



Գծանկար 1. Ապահովագրավճարների թիվը Լիտվայում



Գծանկար 2. Ապահովագրված անձանց վճարված փոխհատուցումների չափը

Գծանկար 1-ը ցույց է տալիս ապահովագրավճարների թիվը Լիտվայում: Եթե դարձնենք AMD, ապա կստացվի մոտ 132 միլիարդ 500 միլիոն դրամ:

Գծանկար 2-ը ցույց է տալիս ապահովագրված անձանց վճարված փոխհատուցումների չափը: Եթե ուսումնասիրենք 2018 թ. արդյունքները, ապա կտեսնենք, որ 250 միլիոն եվրո ապահովագրավճարից ընդամենը 125 միլիոնն է փոխհատուցվել: Մնացած գումարը (հանած ծախսերը), ներդրում կատարելով տարբեր ֆինանսական ակտիվներում, կարելի է ստանալ հսկայական եկամուտ:

Եթե համեմատենք ՀՀ և Լիտվայի բնակչության սոցիալ-տնտեսական վիճակը, ապա կտեսնենք, որ լիտվացիներն ունեն բավարար միջոցներ կյանքի ապահովագրավճարներ տալու համար, իսկ ՀՀ-ում, եթե հաշվի առնենք պարտադիր կենսաթոշակային ֆոնդը և մնացած բոլոր վճարումները, վարկային պարտավորությունները, ապա կտեսնենք, որ ժողովուրդը պարզապես ի վիճակի չէ կյանքի ապահովագրավճարներ մուծելու: Լիտվան, ունենալով փոքրաթիվ բնակչություն, կարողացել է տնտեսապես հզոր երկիր դառնալ: Մեր երկրի աշխարհագրական դիրքը նույնպես նպաստավոր չէ, չունենք ծովային ուղիներ, երկաթուղին չի գործում: Այսինքն՝ բնակչության սոցիալ-տնտեսական վիճակը նույնպես ազդեցիկ գործոն է:

Լիտվայի բնակչության թիվը 2019 թ. դրությամբ 2.759.627 է, ՀՀ բնակչության թիվը 2019 թ. 3-րդ եռամսյակի տվյալներով՝ 2961400: Մեր երկրի բնակչության թիվը 200 հազարով ավելի է Լիտվայի բնակչությունից (2965000-2760000=205000): ՀՀ զբաղվածության մակարդակը 47.9% է, այսինքն՝ զբաղվածները մոտավորապես 964200 են:

Ուսումնասիրենք միջին աշխատավարձերը: ՀՀ-ում միջին աշխատավարձը մոտ 180000 դրամ է, կյանքի միջին տևողությունը 2018 թ. տվյալներով՝ 75.9 տարի, իսկ Լիտվայում միջին աշխատավարձը մոտ 700000 դրամ է, կյանքի միջին տևողությունը՝ 75.8¹:

Կատարենք պարզ հաշվարկներ: Եթե ՀՀ զբաղված բնակչության 30%-ը (964200*30/100=289260) ապահովագրի իր կյանքը՝ ամսական վճարելով իր աշխատավարձի 2%-ը (180000*2/100=3600) (հաշվարկը կատարենք միջին աշխատավարձով), ապա մեկ տարում կհավաքագրվի շուրջ 12 միլիարդ 496 միլիոն դրամ (289260*3600*12)=12,496,032000): Հավաքագրված գումարի 30%-ը (7,810,020) (դոլարով, 1\$=480AMD), ներդրում կատարելով ՀՀ պետական երկարաժամկետ պարտատոմսերում 30 տարի ժամկետով, ենթադրենք՝ 8% տարեկան եկամտաբերությամբ, ժամկետը լրանալու պահին կունենանք շուրջ 78,881,202\$ գումար ($FV = 7810020 * 1.08^{30}$):

Այժմ համեմատենք ՀՀ և ՀՀ ապահովագրության մասին օրենքները: Եթե ՀՀ-ում միևնույն ապահովագրական ընկերությունն իրավունք չունի միաժամանակ զբաղվելու կյանքի և ոչ կյանքի ապահովագրություններով, ապա Լիտվայում օրենքն այլ է: Այստեղ բացառությամբ այն ոչ կյանքի ապահովագրական ընկերությունների, որոնք ունեն կյանքի ապահովագրության վավեր պայմանագրեր, իրավունք ունեն կատարելու իրենց պարտավորությունները մինչև այդ պայմանագրերի ավարտը և իրավունք չունեն մինչև 2004 թ. հունվարի 1-ը կնքված այդ պայմանագրերը երկարաձգելու: Ինչպես

¹ Աղբյուրները՝ www.armstat.am և www.statistica.com

նաև այն ԵՄ երկրները, որոնք օրենքով իրավունք ունեն միաժամանակ զբաղվելու կյանքի և ոչ կյանքի ապահովագրություններով, Լիտվայում նույնպես ունեն դրա իրավունքը¹:

Լիտվայում ապահովագրության մասին օրենքով ֆիզիկական անձը չի ստանում փոխհատուցում, եթե դատապարտվել է կանխամտածված արարքի համար (գույքային, առևտրի, ֆինանսների, հաշվապահության և վիճակագրության հետ կապված վարչական իրավախախտումներ), չարաշահում է թմրամիջոց, թունավոր, հոգեմետ դեղեր, ալկոհոլ և այլն²: ՀՀ օրենքում նման կետ ներառված չէ:

Լիտվայի Հանրապետության օրենքը ապահովագրության մասին ավելի ընդգրկուն է՝ թե՛ ապահովագրական ընկերությունների, թե՛ ապահովադիրների համար ստեղծելով փոխշահավետ պայմաններ: Այն զսպիչ ուժ է հանդիսանում նաև մյուս բնագավառներում և փոխկապակցված է դրանց հետ: Ապահովադիրը, իմանալով, որ փոխհատուցում չի ստանալու 11-րդ հոդվածում նշված իրավախախտումներն իրականացնելու դեպքում, ավելի քիչ շահագրգռված կլինի դրանք կատարելու: ՀՀ-ում թերի է նաև օտարերկրյա ապահովագրական ընկերությունների մասին օրենքը: Եթե օրենքով սահմանված լիներ, որ օտարերկրյա ապահովագրական ընկերությունը, որն իր երկրի օրենքի համաձայն՝ իրավունք ունի կյանքի և ոչ կյանքի ապահովագրություն իրականացնելու, ՀՀ-ում նույնպես կունենա նման իրավունք, ապա, հավանական է, որ նմանատիպ ապահովագրական ընկերությունները մասնաճյուղեր կբացեն ՀՀ-ում:

Եթե ՀՀ-ում ստեղծվեն ԿԱ ընկերություններ և օժանդակություն չստանան պետության կողմից, հաջողության հասնելու հավանականությունն ավելի փոքր կլինի: Մի շարք երկրներում պետությունն այնպիսի գործիքներ է կիրառում, որոնք խթանում են ԿԱ զարգացումը: Պետք է կատարել նորարարություններ առաջարկվող ծառայությունների հարցում:

Օրինակ՝ Մալթայում, նոր ամուսնացած զույգերին պետությունը տրամադրում է 10 հազար եվրո գումար, եթե վերջիններս պայմանագիր են կապել ԿԱ-ից օգտվելու համար, և այդ գումարը փոխանցվում է զույգի հաշվին: Պակիստանում կա ապահովագրություն քաղցկեղից (Cancer protection plan), բարձրագույն կրթություն ստանալու ապահովագրություն (Assured Education plan), որի դեպքում ծնողների վճարած գումարից ձևավորված փաթեթի միջոցներն ուղղվում են երեխայի բարձրագույն կրթություն ստանալուն (վարձավճարի մոծմանը)³:

Հնդկաստանում մեկ պայմանագրով կարելի իրականացնել երկու անձի ապահովագրություն (Two lives in one contract), Ֆիլիպիններում գործում է All in one (AIA) ապահովագրական պայմանագրի տեսակը, որի համաձայն՝ մի քանի ապահովագրական դիսկեր (դժբախտ պատահարներ, հաշմանդամություն, ծանր հիվանդություններ, վաղաժամ մահ) ապահովագրվում են մեկ պայմանագրով⁴:

¹ Աղբյուրը՝ «Լիտվայի Հանրապետության օրենքը ապահովագրության մասին»՝ 2003 թ. սեպտեմբերի 18-ին, 1-ին գլխի 8-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետեր:

² Նույն տեղում, 1-ին գլխի 11-րդ հոդված:

³ Աղբյուրը՝ <https://www.jubileelife.com/>

⁴ www.philamlife.com

Մի շարք երկրներում ապահովագրավճարների չափը սահմանելու ժամանակ հաշվին են առնվում տվյալ անձի ամսական եկամուտները:

Ուսումնասիրելով տարբեր երկրների ապահովագրական շուկան և մատուցվող ծառայությունները՝ կարելի է համոզվել, որ ՀՀ-ում չեն արվել և չեն արվում այնպիսի քայլեր, որոնք կխթանեն ԿԱ զարգացումը: Առաջարկում են հետևել որոշ երկրների օրինակին և կատարել մի շարք փոփոխություններ «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքում՝ ապահովագրական ընկերություններին թույլատրելով միաժամանակ իրականացնել կյանքի և ոչ կյանքի ապահովագրություն, ինչը կհանգեցնի ծախսերի կրճատման: Բացի այդ, ՀՀ ապահովագրական 6 ընկերություններն էլ արդեն իսկ մասնագիտացած են ապահովագրության բնագավառում և գիտեն, թե որ արժեթղթերն են ավելի ձեռնտու: Առաջարկում են նաև ապահովագրավճարների ներդրումներից ստացված եկամտի որոշակի տոկոս պարբերաբար փոխանցել ապահովադրի հաշվին՝ հնարավորություն տալով այն օգտագործելու, քանի որ բնակչությունն այսօր ունի ֆինանսական խնդիրներ: Կամ ԿԱ պայմանագիր կնքելուց հետո նշված անձին տալ հարկային արտոնություններ որոշակի ժամանակահատվածի համար (ենթադրենք՝ հինգ տարի ժամկետով), ապահովագրավճարները սահմանել ըստ մարդկանց եկամուտների, այսինքն՝ կիրառել այնպիսի միջոցներ, որոնք մարդկանց կշահագրգռեն: Որպես թիրախային խումբ՝ առաջարկում են ընտրել երիտասարդությանը և ուսումնասիրել նրան հուզող խնդիրները: Մի շարք երիտասարդներ, ի վիճակի չլինելով վճարելու ուսման վարձը, զրկվում են բարձրագույն կրթություն ստանալու հնարավորությունից: Որպեսզի դա հետագայում խնդիր չդառնա ծնողների և նրանց երեխաների համար, կարելի է հետևել Պակիստանի օրինակին և ներդնել «Ապահովագրված կրթություն» ծրագիրը (Assured Education Plan):

Եզրակացություն

Ուսումնասիրելով այն երկրների փորձը, որտեղ կան կյանքի ապահովագրության ընկերություններ, կարելի է գալ այն եզրակացության, որ դրա համար պետք է կապիտալացման բարձր մակարդակ: ՀՀ ապահովագրական շուկան դեռ ձևավորման փուլում է: Կարծում են, որ կյանքի ապահովագրության զարգացման համար չկան նպաստավոր պայմաններ: Բացի այդ, ՀՀ բնակչության սոցիալ-տնտեսական կարգավիճակը նույնպես նպաստավոր չէ, և այդ պատճառով էլ կյանքի ապահովագրության պահանջարկ չկա:

Կա նաև բնակչության իրազեկվածության խնդիր: Կատարելով որոշ հարցումներ ՀՀ բնակչության շրջանակում՝ եկա այն եզրակացության, որ մեր բնակչության մեծամասնությունը գաղափար չունի կյանքի ապահովագրության մասին:

Կյանքի ապահովագրություն ներդնելու համար, նախ և առաջ, պետք է բարելավել բնակչության սոցիալ-տնտեսական կարգավիճակը, նպաստավոր պայմաններ ստեղծել ապահովագրական շուկայի զարգացման համար, լուծել իրազեկվածության խնդիրը, ինչպես նաև կատարել նորարարություններ առաջարկվող ծառայությունների շրջանակում:

Գրականություն

1. «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքը, 2007 թ. ապրիլի 9:
2. «Ապահովագրության մասին» Լիտվայի Հանրապետության օրենքը, 2003 թ. սեպտեմբերի 18:
3. Ճուղուրյան Ա., Աբգարյան Կ., Ապահովագրական գործ, ուս. ձեռնարկ, Եր., 2007, 576 էջ:
4. Բադանյան Լ., Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ, «ՄՈՍ» ՍՊԸ, Եր., 2010, 586 էջ:
5. www.armstat.am
6. www.gda.lt/en/information/
7. www.jubileelife.com/
8. www.lb.it/en/
9. www.philamlife.com
10. www.statistica.com

ШОГЕР ГАСПАРЯН

Финансы, бакалавриат, 1-й курс

ПРОБЛЕМА ВНЕДРЕНИЯ СТРАХОВАНИЯ ЖИЗНИ В АРМЕНИИ

Ключевые слова: *страхование жизни, страховая компания, страховой полис, риск, страховой интерес, капитализация*

Компании по страхованию жизни, являющиеся крупными инвесторами в экономике, отсутствуют в республике Армения. Причины и факторы, влияющие на перспективы развития, отражены в этой статье. Представлены сущность и классы страхования жизни. В статье проводится также сравнение со страховым рынком Литовской Республики.

SHOGER GASPARYAN

1st Year, Bachelor's Degree, Finance

ISSUES OF LIFE ASSURANCE INVESTMENT IN THE REPUBLIC OF ARMENIA

Keywords: *life insurance, insurance company, policyholder, insurer, risk, insurance interest, capitalization*

Though life assurance companies are considered to be important investors in economy, they do not exist in the Republic of Armenia. This paper touches upon the reasons and the factors influencing the development perspectives of the sphere. The research also carries out a comparative analysis between Armenian and Lithuanian insurance markets.